Դանիել Վարուժան

Հեթանոսական երգեր



eMatenadaran

Դանիել Վարուժան
Հեթանոսական երգեր

http://www.litres.ru/pages/biblio_book/?art=24431326
Հեթանոսական երգեր:
ISBN 9781772468229

Аннотация

«Հեթանոս երգեր» բանաստեղծությունների ժողովածուն լույս է ընծայվել 1912 թ. Կ.Պոլսում: Ժողովածուն գրված է հեթանոսական շարժման սկզբունքներին համապատասխան: Ժողովածուն բաղկացած է երեք բաժնից՝ «Գողգոթայի ծաղիկներ» ու «Հեթանոս երգեր» շարքերից եւ Հարճը պոեմից: Առաջին շարքում պատկերված են իրականությունը, բուրժուական իրականության զոհ բանվորներն ու աշխատավորները (Աստուծո լացը, Մեռնող բանվորը, Խաբված կույսեր, Միջոն, Սպասում, Ընկեցիկը, Պատգամավորներս եւ այլն): «Հեթանոս երգեր» շարքում պատկերված է իդեալը, մարդու պաշտամունքը: Այս շարքի բանաստեղծությունները կնոջ ու գեղեցկության գովերգեր են (Կղեոպատրա, Օ, Տալիթա, Հեթանոսական, Արեւելյան բաղնիք, Օրհնյալ ես դու ի կանայս, Անահիտ եւ այլն):

Содержание

ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԻՆ 4
ՎԱՆԱՏՈՒՐ 5
ԵՐԵՔ ՔՈՒՅՐԵՐ 10
ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ 12
ԿՂԵՈՊԱՏՐԱ 16
ՋՈՒՐԻՆ ՎՐԱ 20
Ո՞Ր ՏԱԼԻԹԱ 21
ԱԴՈՆԻՍԻ ՄԸ 23
Конец ознакомительного фрагмента. 24

Դանիել Վարուժան
Հեթանոսական երգեր

ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԻՆ

Կ’ուզեմ ըլլա քու մարմարիո՛նըդ պեղված
Ոլիմպոսի ամենեն խոր արգանդեն.
Եվ իմ մուրճիս տակ ըզգենու հըրեղեն
Միս մը կընոջ, լույսով, տենդով սըրարբած:

Աչքերդ ըլլան վիհեր՝ ուր մարդ երբ սուզի՝
Հավերժին մեջ անմահացած ըզգա զինք.
Գիծերդ անե՛ղծ ըլլան, ըլլան քու ըստինք
Դաշնակություն մ’ուր կենսահյութը հուզի.

Մերկ ըլլաս դուն բանաստեղծի մ’հոգվույն պես,
Եվ հեթանոս այդ մերկությանըդ ներքև
Տառապի՛ մարդն ու չըկրնա դըպչիլ քեզ:

Թե հարկ ըլլա զոհ մը ընել քեզ պարգև,
Բագինիդ ե՛ս պիտի ուզեմ մորթըվիլ՝
Որպեսզի կուճդ ըմպե արյանս հուսկ կաթիլ:

ՎԱՆԱՏՈՒՐ

… Ամենաբեր նորոց պտղոց տօնից
հյուրընկալ դիցն Վանատրի.
ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

Ներստած պարարտ եզիդ վրա, ո՛ Վանատուր,
Մեկ ծագեն մյուսը կանցնիս
Հայրենական դաշտերուն:
Մեռա՞ն բոլոր մեծ աստվածները, իրենց
Բագիններուն վրրա մամուռը կ՚աճի:
Անմահ եղար դո՛ւն միայն
Ներման հողին և կրրակին, ու նրման
Օվկիանոսի աղերուն:
Ուսերուդ հիր պատմուճանեն դեռ կու գա
Գինիի հոտն Ամանորի տոներուն:
Հակառակ այնքա՞ն դարերու ավերին՝
Բիբերրդ դեռ զրվարթություն կը բրդխեն.
Ու կենեղուտ դեմքիդ վրա
Արբեցողի կարմիր ծիծաղն է ծեփված:
Ու երբ պարարտ եզիդ վրրա կ՚այցելես,
Ծաղկամիսեն Միգաբեր,
Անեզրությունն հայրենական դաշտերուն՝
Կ՚հոսի ալի՛քը կյանքին
Ակոսներեն հայրենակա՞ն դաշտերուն:

Ահա գարունն ու զարթումներն իր առույգ.
Հիրիկներո՛վ պըսակվե, ո՛ Վանատուր,
Ճամբուդ վրա ճառագայթներ կը հոսին
Երակներո՛ւդ պես զեղուն.
Եվ կը թաղվին կանանչին մեջ ցողաթուրմ
Բոլոր քարերն ըսպիտակ:
Կըտուրներեն գեղջկական
Կը բարձրանա ծուխը, խունկի պես խաղաղ:
Թող ես վարդով և ուլունքով գեղաշար
Քառամանյաբս կախեմ
Պարանոցեն քու եզիդ,
Հըլու եզիդ՝ որ դարձած՝
Մերթ կը լիզե բոպիկ ոտքերդ Աստվածի:
Օ՛, իր պոչյուը գերազոր, որ ահա
Քարանձավե քարանձավ
Կ'արթընցընե թըմրած օձերն ու արջերն,
Ու խաղաղ կյանքն արևուն տակ կը պոռթկա:
Ատղերը մեղը՛ր կը ծորեն երկընքեն
Նայադներու սափորներուն մեջ մարամար
Արշալուսված աղբյուրներուն եզերքին
Աղավնիներ կը լոգնան
Իրենց կտուցեն մարգարիտներ սըրսկելով:
Ծիծաղե՛, ո՛ Վանատուր,
Քու հեթանոս ծիծաղներովդդ վըճիտ,
Զի բընությունն արթընցա՛վ իր քողերեն.
Զի Բերկրությունն, արգասավոր և անհուն,
Օդին մեջեն կ'անցնի կ'երթա, նըման
Մեծ կարապի մը վայրի,
Քու հաղթանա՛կըդ կ'երգե:

Ահա ամառն ու իր անդերը խարտյաշ.
Որաներո՛վ պլսակվե, ո՛ Վանատուր:
Պլճեղներուն տակ եզիդ
Մատղաշ ցորյանն անտառացավ. այժլմ իր
Ծովերուն մեջ՝ ոսկյա լոգանքլդ ըրե՛:
Թուփերուն տակ ծաղկահեղց
Բույներն են լի՛ օրհնությամբ,
Եվ արտույտին երգն արևե՛ն մեզ կու գա:
Քու արգավանդ անույշ շունչդ է՝ որ կ'անցնի
Դալարավետ բլլուրներուն կողն ի վար:
Երդիքին վրա քընացող

Գեղջուկին աչքն ա՛լ կը բանա՝ Արշալույսն,
Եվ կը փակե՝ Լուսնկան:
Հյուղերն են լի համեմներու բույրերով,
Ավերակներն իսկ մոխրապատ՝ են զեղուն
Եղիճներու, մոլոշներու հունձքերով:
Ուռենիին տակ, Վանատո՛ւր, կը զոհեմ
Նոխազը, քեզ նըվիրված,
Քամակին վրա՝ ակոսի պես կը ճեղքվին.
Նոխա՛զն որ միշտ կը կլրծեր
Սուրբ շերտափակն այգիիդ:
Արյո՛ւն խըմե ու մի՛ս կեր, ո՛ Վանատուր,
Քու հինօրյա խըրախներովդ հեթանոս,
Ջի հասկաթուռ ցորյանին մեջ փայլակող
Գերանդիներ քե՛զ կ'երգեն:

Ահա աշունն ու արյուններն իր հուռթի.

Որքատունկո՞վ պըսակվե, ո՛ Վանատուր:
Նիզակըդ ա՛ռ, որուն վըրա ոլորուն
Բարունակներ կը ծաղկին.
Թող ես եզիդ եղջյուներն
Ողկույզներո՛վ զարդարեմ:
Մըրգածառերն, հըղի կընոջ մը նման,
Կ'հևան իրենց բեռին տակ.
Բուներն համակ կըպչուն են քա՛ղցըր հույզով.
Կորիզն ամեն պըտուղի
Քու սերմովդ է պընդացած.
Եվ քու եզիդ շողիքով
Օծված է հողը բեղուն:
Ամբարներն ողջ՝ խաղաղությամբ կը լեցվին,
Եվ կարասներ՝ ցընծությամբ…
Թող, թեղերուն մեջ, ուտե եզըդ գարի՛ն
Աստղերու պես: Իսկ դուն, Աստվածըդ զըվարթ,
Աստվածըդ գեր, վարդերես,
Ա՛ռ դաշխուրանդ, ըմպե՛ այրունը աշնան:
Աղբյուրին քով ես քեզի
Մատըռվակեմ թող գինի՛,
Մատըռվակեմ թող բոցե՛ր,
Ծիծաղե՛, ո՛ Վանատուր,
Ո՛ Վանատուր, կաքավե՛.
Ջի այգիեն տերևաթափ՝ կ'երևան
Հավերժահարսերն, երկայնքն ի վեր ցանկերուն,
Եվ աղջիկներ, նուռ լեցուցած գոգերնին,
Դեպի մեհանըդ կ'երթան.
Ջի դու անմահ ես՝ դիքերեն վերջ մեռած՝
Օվկիաններու աղին պես,

Ջի տաղտկալի ձըմրան մեջ,
Հայրենական օճախներուն քով խաղաղ,
Ամեն կիթառ քե՛զ կ՚երգե:

ԵՐԵՔ ՔՈՒՅՐԵՐ

Անոնք երեք քույրեր էին
Նըման երեք Շընորհներուն.
Երեքն երեք ուխտեր ըրին
Առջևն երեք բագիններուն:

Երեցն ըսավ. – “Դի՛ք կայծակի,
Քե՛զ կը ձոնեմ մազերս ոսկի”:

Միջնեկն ըսավ. – “Ըզգա՛ստ Հիմեն,
Քեզ կ’ընծայեմ մատնիս հրեղեն”:

Կըրտսերն ըսավ. – “Վավա՛շ Աստղիկ,
Ա՛ռ իմ կույսի գոտիս ծաղիկ”:

Ո՛վ որ մազերն ձոնեց Զևսի՝
Յոթը ազգի յոթ խույր կապեց
Գահին վըրա Արտաշեսի:

Ո՛վ որ մատնին տվավ Հիմենին՝
Յոթը չըքնաղ հերոս ծընավ
Գերահըզոր Հայաստանին:

Ո՛վ կույս գոտին մեջքեն ձըգեց՝
Ան՝ տառապյալ քույրը եղավ,

Եվ բոզնոցին մեջ նուռ ծախեց:

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ

Ապարանքին մեջ մարամար կախարդական Երազին,
Ու աստղակուռ ջահեր լույս անձրևելով կը վառին,
Ես Արքա մ’եմ այս գիշեր Արևելքի ճոխությանց,
Եվ ունիմ գահ ու գանձեր, ճերմակ կիներ հերապանծ:
Բազմոցիս վրա՝ զարդարված հովազներու մորթերով՝
Գըլուխս հեցած դաստակիս, և հեշտության մեջ գինով,
Ընկողմանիկ կը դիտեմ Չերքեզուհի մը անձնյա՝
Որ կը պարե իմ առջև, մարգարտահեռ գորգին վրա:
Իր հոտևան մազերեն և մարմինեն ծալ ի ծալ
Կը հոսի ծով մ’հեշտության՝ ուր կը սիրեմ ես լողալ:
Ըզգեցեր եմ փառահեղ պատմուճաններս ըսպիտակ
Բանված հազար աստղերու արցունքներովը սուտակ.
Ծուրջը գլուխիս փաթթեր եմ ապարոշս իմ ձյունափայլ՝
Ծանըր՝ նըման իմ փառքիս, հանճարիս պես՝ բյուրածալ:
Մատնիներով ադամանդ ծանրաբեռնված ձեռքիս մեջ
Համրիչըս հի՛ռ կը գըլեմ մեծ սաթերով փողփողէջ:
Ինկեր եմ վար ոտքերես անխնամ գորգին վրա քըրքում
Հողաթափերս ոսկեհյուս և թաշկինաս ապըրշում:
Իսկ զետեղված է իմ քով, կենսաժըպիտ, փըրփրադեզ,
Հըսկա բաժակըս գինվո՝ որ հըրաշքով մը կարծես
Դեռ նոր հոսված արյան պես կը պըճըլտա իմ առջև:
Սակայն բիբերըս ծարավ գույն ու մարմնո գեղածև՝
Մագարեի մ’աղոթող բիբերուն պես տեսլացած՝
Անհունորեն սուզեր են հորձանքին մեջ ճախրասլաց

Այն թրխաչվի աղջրկան, Չերքեզուհվույն համպարե՝
Որ իմ առջև կը պարե՛, միշտ կը պարե՛, կը պարե՛…
Իր շարժումն հո՛յլ է երբեմն, ու իր հասակն է նրման
Հողմնասարսուռ եղեգին, բույր ու փրրփուր, երգ համայն.
Իսկ երբեմն այնքա՛ն զորեղ թափ մը կու տա ոտքերուն՝
Որ խարույկված բոց կ՚ըլլա՝ քամիներն ծրփծրփուն:
Օ՛, ան միսին ձևերուն և ծալքերուն հանճա՛րն է.
Գիտե հեղուլ հորդառատ նայվածքներե, մարմինե
Բոլոր հրապույրը կընոջ և տրոիփները հեշտին՝
Որոնք նրման ծովերու առջևս անզուսպ կը փրրփրին:
Ու կը պարե՛, կը պարե՛, հորձանապտույտ կը պարե՛…
Քրրտինքներով կը պրտղի ճակատն հրստակ փայլարե:
Վեհ հասակն իր կախարդի՝ մազերուն տակ ծածկրված՝
Ուռենիին խոռվքն ունի՝ լրճակին վրա ցոլացած:
Մերթ դեպ ետև կը թեքի, մերթ ալ դեպի ընդառաջ.
Հազիվ եղած շամբ ճրկուն, կ՚ըլլա բարտի մ՚աննրվաճ.
Եվ մերթ ցընցուն ոստումով՝ կարծես իրանն հրաշագեղ
Հանկարծակի կը փրշրե փոշիաբար գերդ բյուրեղ.
Ու հազիվ հազ դաշնակում մ՚իր մարմինեն եղծանած՝
Նոր թեքումով կ՚հորինե նո՛ր դաշնակում մը հանկարծ:
Մարգարտահեռ մուճակներն, ուր ոտքերն իր ձուլվեր են,
Կարծես հազիվ կը հրպին գորգին վրրա նրկարեն.
Ու իր հատուկ ճախրանքեն կ՚առնու հով մ՚ա՛յնքան ծավալ,
Որ կը մարե երբեմն հա՛պ, ու կ՚արծարծե երբեմն ալ
Իր ականջին օղերուն փայլատակները լազվարթ
Ու իր բոլոր քայոերուն ճառագայթները զրվարթ:
Ու կը պարե՛, կը պարե՛, կատաղորեն կը պարե՛,
Միշտ հրպատակ ցոփ կամքիս՝ որ զինք ընդմիշտ կը

վարե:
Գլուխեն վե՛ր կը նետե նուրբ պատմուճանն հապշտապ.
Կը մերկացվին ըստինքներն ու պարանոցը կարապ,
Ու որովայնը բարի՝ իր սև պորտով կընքված,
Եվ հույր բումբերը, բոլո՛ր մյուս մասերն առեղծված
Համակ խորհուրդը միսին ու իր անճառ ձևերուն՝
Ուր դրրեր է իր վերջին հանճարը միտքն Աստծուն:
Երբ կը տեսնե իր աչքով մերկությունն իր բյուրեղյա՝
Հրապույրներու այդ բոլոր շռայլման վրրա կ՚ամչընա.
Այն ատեն ցունց մը կու տա փորթորկալից մազերուն՝
Որոնց քամին թափընդթափ կ՚երթա մաել սրրսրփուն
Ադամանդե ջահերն այն մարմարակերտ պալատին,
Մարմարակերտ պալատին ձեղնալույսերը ոետին:
Ո՜վ մերկություն հրաշագեղ, Հավերժահա՜րս ամոթլյած՝
Որ խորհուրդի մը նրման մրթության մեջ ես ղողված…
Այն ժամանակ կ՚ոստնում վեր կիրքերուս մեջ ծարավի՝
Թողլով որ ձյուն ապարոշս իյնա ոտքիս տակ լուծվի:
Մրթարին մեջ առխարխափ Չերքեզուհին կը գտնեմ՝
Առաջնորդված իր կուրծքին հևքերեն բուռն ու վրսեմ,
Եվ քրրտնաթոր դաստակեն պինդ բրռնելով՝ մեկուսի
Կը պառկեցնեմ բազմոցիս մորթերուն վրա հովազի:
Օ՜, մագնիսով և լույսով թրրծունմարմինն աղարծրի՝
Որ թևերուս մեջ կաթի արյունի պես կը փրրփրի.
Օ՜, իր մազերն հոդածուփ՝ որոնց մեջ ես կը լողամ
Խորը անոնց խեղդվելու վրտանգներով հարաժամ,
Օ՜, ջերմությունը սատափ բազուկներուն տարփակեզ՝
Որոնցմով վիզրս զորեղ կը պարուրե օձի պես:
Հուսկ իրարու կ՚միանանք մենք համբույրով մը հրզոր…
Երբ կը ծրծեմ բերնիս մեջ առած շրրթներն իր բոսոր,

Երբ ժամերով կը քամեմ բյուր երակներն, հուլորեն,
Օ՜հ, այն ատեն ճաշակած կ’ըլլամ կարծես համորեն
Հին դարերուն հեթանոս դահամունքներն հազածո,
Հընդկաստանի համեմնե՜րն, համյն խունկե՜րն Արաբիո:

ԿՂԵՈՊԱՏՐԱ

Կյուղնոսին վրա քարավազ
Հընչեց տավիղ, հընչեց վին..
Եթովպիացի մ’ոպնիազ
Կ’երգե՝ քիթին վրա կուրին.

–“ Սահե՛, ո՛վ նավ, սահե՛ շուտ.
Արծաթ ցոուկիդ ես գերի.
Մեջրդ սիրտ մը բոցանուտ
Դափնեվարդի պես կ’այրի:

Դրշխո՛, նավակրդ բուրյան
Ունի սատափ թևճակներ՝
Որոնց ծայրեն կը տեղան
Ադամանդյա կայլակներ:

Սահե՛, ո՛վ նավ, սահե՛ շուտ
Ահա Տարսոնը գինով:
Կ’ուզե Իտալը անգութ
Շրդթայվիլ մեղկ թևերով:

Բաբի՛շ, դեմքեդ կը ցոլան
Բոցեր՝ գետի երեսին.
Լուսինն այսպես կու գա ման
Ջուրերուն վրա Նեղոսին:

Սահե՛, ո՛վ նավ, սահե՛ շուտ
Ծաղկածիծաղ ափն ի վեր.
Նուռ մ՚ավասիկ կարմրակուտ
Այգիեն մեջդ է ինկեր:

Դրշխո՛, վրրադ պարգեր են
Ամպհովանի մ՚ոսկեթույր,
Առջևրդ խունկ կը ծրխեն
Յոթը նաժիշտ, յոթը քույր:

Սահե՛, ո՛վ նավ, սահե՛ շուտ
Եվ օրորե թագուհին…
Մեր տակ կ՚երգե ջուրն ընդփույթ
Պատմելով թովքն անդունդին:

Բամբի՛շ, ծոցիդ բուրումեն
Վիհին օձերն արթընցան.
Շուրջրդ ահա կ՚արտասվեն
Մարգարիտներ մոգական:

Սահե՛, ո՛վ նավ, սահե՛ շուտ
Տարսոնն հեռուն կ՚երևա.
Ջահեր կ՚այրին բոցանուտ
Նիզակներուն ծայրին վրա:

Դրշխո՛, կողեն նավակին
Ներս քաշե ձեռքրդ քընքույշ.
Մատնիդ կ՚իյնա խորն ալքին.

Կ’ընկրղոմվի կույսրդ, ըզգո՛ւյշ:

Սահե՛, ո՛վ նավ, վիհին վրան
Բաբելոնյան կա՛խ պարտեզ՝
Ուր Շամիրամն է՝ շուշան,
Կղեոպատրան՝ վարդ մ’է վես:

Բամբի՛շ, գոհարը թագիդ
Եղավ Քաղքին ա՛լ փարոս:
Աչքը քեզի անքրթիթ
Հոն կը սպասե Անտոնեոս:

Սահե՛, ո՛վ նավ, շո՛ւտ սահե,
Քանի որ մեջդ է Իսիս՝
Ցրոուկդ աշխարհ կը ջահե՝
Քանի որ մեջդ է մայիս:

Դրշխո՛ւ, երկիր պագին ա՛լ
Լեգեոններն Հրոռվմի:
Ըզքեզ դատող սալարն ալ
Հմայքեդ դողալ կը թվի:

Կեցի՛ր, ո՛վ նավ, շո՛ւտ կեցիր.
Ափը կ’ելլե թագուհին,
Երգս ալ կ’ըլլա ցանուցիր.
Պետք է փոխեմ լարերս հին”:

Գուսանն ա՛լ վինը չածեց.
Իսկ համբույրով մ’այն գիշեր

Կին մ’Իտալիան նըվաճեց,
Մարդ մը Բուրգերն հաղթաժեռ:

ՋՈՒՐԻՆ ՎՐԱ

Ներվագե՛ կիթառդ, ո՛վ իմ Մելինա,
Լուսինն է ցաթեր, վերքի պես լանջքիս.
Երգդ, իբրև ըսպունգ, կը ծրծե ահա
Աստղերն երկընքին, արցունքներն աչքիս:

Աշխարհը մոռնա՞նք. ջուրին վրա՝ լուսնին
Լուսասփյուռ ճամբա՛ն ըլլա մեր ճամբան…
Երբ պըսակեմ գլուխս ողկույզով, Մելի՛ն,
Սըրտիս արյուննե՛ն իսկ գինի կ՚ըլլան:

Թող երգդ հըրճըվի՛. Ծովը լուսավետ
Անդունդին աղով կ՚օծե գանգուրներդ՝
Ջոր խառնեց ահա այուքը՝ լարերուդ:

Թող երգդ արփենա՛. լեցուցի գինին
Կիթառիդ տոսախ պորտին մեջ հըրուտ…
Աստղի՞կն է նըստեր մեր նավուն քիթին:

Ո՛Տ ԼԻԹԱ

Կարմրաշառայլ լույսերուն մեջ կը վառի
Կապելադ, ո՛ Տալիթա։
Բե՛ր գարեջուրն, և թող փրփուրն հոսանուտ
Մատերդ ի վար պըղպըջա։

Ի՛նչ փույթ թե ես ազնըվական կը թվիմ,
Ունիմ ձեռքեր քընքշենի.
Եվ ի՛նչ փույթ թե դուն աղջիկ մ’ես ջըլեբաց՝
Որ բանվորներ կ’ընդունի։

Կ’ատեմ կիներն՝ որոնք դիմացն հայլիին
Դիմաներկեր կը շաղվեն.
Կը ծըցընեն Ծերակույտի անդամներ
Տըռփանքներով տարորեն։

Դահլիճներուն փարթամ կիները կ’ատեմ.
Իրենց կավատն է՝ ոսկին.
Ջիրենք սիրողը կը սպառեն, և իրենք
Տան շընիկեն կը սպառին։

Բե՛ր, Տալիթա՛, բե՛ր գարեջուրն, ու նըստե
Ծունկիս վրա՝ թույլ տալով
Որ աղախնի կարճ քըղանցքեդ երևնան
Բումբերըդ՝ սև գուլպայով։

Թող ճրրագներդ հյուծին մինչև առավոտ,
Եվ թող շեմին վրա երգե
Գինով աշուղն՝ հառած բիբերը մեզի,
Բիբերը զուրկ կրրակե:

Թող մազերուդ ոսկի հյուսկերը քակես
Գավաթին մեջ բյուրեղյա,
Եվ ծունկերես վար սրրունքներդ օրորես՝
Մինչև որ սերս հասուննա:

Ինծի ի՛նչ փույթ թե շրթունքներդ են խածեր
Նավաստիները կոպիտ,
Եվ հոսեր են քրրտինքն իրենց տրոփանքին
Աչքերուդ մեջ՝ ու ծոցիդ:

Այսօ կ’ուզեմ կուրծքիդ վրրա գինովնալ
Ինչպես զինվոր մը արբուն.
Կ’ուզեմ պարպել գավաթդ, և դուն ալ պարպես
Սիրտրս՝ նուռի պես հասուն:

Այսօր կ’ուզեմ դահլիճին մեջ ծաղրրված
Սերրս առջևրդ պղծել,
Խաբված հոգիս բերել ռամիկ աղջրկան
Գարեջուրով մը ծախել:

ԱԴՈՆԻՍԻ ՄԸ

Արշալույսին դեմ խեփոր մը բացիր՝
Զոր ծովն ոտքիդ տակ նետեց վիհերեն:
Արշալույսին դեմ խեփոր մը բացիր,
Կը փայլեր իր մեջ մարգրիտ մ’հոյաշեն:

Կը փայլեր իր մեջ մարգրիտ մ’հոյաշեն՝
Զոր ճակտիդ վրա դըրիր ներդաշնակ:
Կը փայլեր իր մեջ մարգրիտ մ’հոյաշեն
Վայրի կատուի մ’աչքին հանգունակ:

Վայրի կատուի մ’աչքին հանգունակ՝
Մարգրիտն ուղիիդ լույս տըվավ գիշերն:

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, купив полную легальную версию на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.